

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ **թղթադրամ հաշվող մեքենաների** մատակարարման վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 01.04..2024, 17:00

- Էլեկտրոնային տարբերակով՝ [procurement@inecobank.am](mailto:procurement@inecobank.am) էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը -01.04.2024/թղթադրամհաշվող: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել «.rar» տարբերակով, կողավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո [procurement@inecobank.am](mailto:procurement@inecobank.am) էլ Հասցեով մինչև 02.04.2024թ-ին մինչև ժ. 11:00 :

- Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ “Ինեկոբանկ” ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝

- ԳՆՀ կոդը -02042024/թղթադրամհաշվող
- մասնակցի անվանումը,
- ներկայացման ամսաթիվը,
- ստացող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:

3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել.  
Կոնտակտային անձինք

1. Աղմինիստրատիվ ստորաբաժանում, Գնումների բաժնի պատասխանատու աշխատակից **Լուիզա Ղազարյան,**  
**+37433008896**

2. Տեխնիկական բաժնի ղեկավար՝ **Սուրեն Հովհաննիսյան՝** **+37443002262**

4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
  - Գնառաջարկ,
  - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
  - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
  - Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոններին համաձայնությունը
  - (ցանկացած այլ չափանիշ՝ սահմանված Կարգի 6.3.4.3.1 կետով):
8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասնել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:

11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
13. Վճարումները կատարվում են հնեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

**ԳՆԱՌԱՋԱՐԿ**

**«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի \_\_\_\_\_ նվերների գնառաջարկների ներկայացման հարցում**

	Գնման առարկայի անվանումը	Զանակը	Միավորի արժեքը ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ
1	<b>թղթադրամ հաշվող մեքենա (5 գրպան)</b>	<b>2 հատ</b>		

Առաջարկում ենք կատարել մատակարարումը \_\_\_\_\_ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար \_\_\_\_\_ դրամ:

\_\_\_\_\_ Մասնակցի/կազմակերպության անվանումը

\_\_\_\_\_ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

" \_\_\_\_\_ " \_\_\_\_\_ 2024թ  
Կ.Կր